CLIMATE CHANGE TECH ACCELERATOR

ImpactAim
Venture Accelerator

UNDP
Empowered lives.
Resilient nations.

ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՎՈՂ ԷՆԵՐԳԻԱ

ՀԱՅՏԵՐԸ ԲԱՑ ԵՆ

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍՏԱՐՏԱՓՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հիմնական գործընկերներ՝

ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆԿՈՒԲԱՑՈՐ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ENTERPRISE INCUBATOR FOUNDATION

istc FOUNDATION

Աջակից գործընկերներ՝

ENGINEERING CITY

With financial support from the Russian Federation

ADB Ventures
with support of ADB Ventures

Ի՞ՆՉ Է CCTA2020-Ը ԵՒ ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

CCTA2020: Էներգախնայողություն և վերականգնվող էներգիա

Ուրախ ենք տեղեկացնել, որ **ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի** ImpactAIM **«Կլիմայի փոփոխության տեխնոլոգիական աքսելերատոր»** (Climate Change Tech Accelerator | CCTA) ծրագիրը վերադառնում է երրորդ անգամ՝ էներգետիկ ոլորտը կայուն զարգացման նպատակների (ԿԶՆ) ուղղությամբ վերաձևափոխելու նոր նպատակով:
ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) ImpactAim աքսելերատորը՝ «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի (EIF) և «Ինովացիոն Լուծումների և Տեխնոլոգիաների կենտրոն» հիմնադրամի (ISTC) հետ համատեղ հրավիրում են Հայաստանում և արտերկրում հիմնված տեխնոլոգիական նախաձեռնություններին՝ դիմելու «Կլիմայի փոփոխության տեխնոլոգիական աքսելերատոր» 2020 ծրագրին, որը թիրախավորում է **«Էներգախնայողության ու վերականգնվող էներգիայի»** մարտահրավերները:

Ավանդական և այլընտրանքային էներգիայի, ինչպես նաև նոր էլեկտրակայաններում ներդրումներ կատարելու և էներգախնայողության խթանման միջև երկընտրանքն այսօր դարձել է համաշխարհային մարտահրավեր: Ի պատասխան կլիմայական փոփոխությունների մարտահրավերների՝ CCTA 2020-ը նպատակ ունի ամբողջ աշխարհից համախմբել տեխնոլոգիական և նորարարական գաղափարներ, լուծումներ և արտադրանքների՝ ՄԱԿ-ի Կայուն զագացման նպատակներինհամապատասխան էներգետիկ ոլորտի վերափոխման ջանքերին միանալու և երկրների էներգետիկ անվտանգությանը նպաստելու համար:

ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

«Էներգախնայողություն և վերականգնվող էներգիա» խորագրով CCTA 2020-ը փնտրում է տեխնոլոգիական ստարտափներ, որոնք կառաջարկեն լուծումներ ուղղված հետևյալ մարտահրավերներից* մեկին կամ մի քանիսին՝

1. **Արհեստական բանականությունը էներգիայի պահանջարկի կառավարման համար.** ԱԲ-ի միջոցով տվյալների վերլուծություն և որոշումների կայացում
2. **Պասիվ և խելացի կենսապայմաններ**
3. **Արդյունավետ ջեռուցման և/կամ սառեցման լուծումներ.** Ջեռուցման և/կամ սառեցման տեխնոլոգիաներ, որոնք էներգաարդյունավետ են և մատակարարվում են վերականգնվող աղբյուրներից
4. **Ջրածնային էներգիա**
5. **Անկախ էներգացանցին միացած վերականգնվող էներգիայի աղբյուրներ**
6. **Կորուստների կրճատում՝ էներգիայի փոխանցման և ձևափոխման համակարգերում**

Մարտահրավերների մանրամասներին ծանոթացեք ԱՅՍՏԵՂ

* *COVID-19*-ի մարտահրավերների շրջանակներում նորարարական գաղափարներ առաջարկող անհատներին ու թիմերին կտրվի առաջնահերթություն:

ԱՔՍԵԼԵՐԱՑԻՈՆ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

CCTA2020: Էներգախնայողություն և վերականգնվող էներգիա

CCTA 2020-ը 16 շաբաթ տևողությամբ վերապատրաստումների և մենթորության աքսելերացիոն ծրագիր է, որի շրջանակում ստարտափները կպատրաստվեն ներդրումների ներգրավման և շուկա մուտք գործելու, մասնավորապես՝

- **Բիզնեսի զարգացման աջակցություն.** Մասնակից ստարտափները կուղղորդվեն բիզնեսի զարգացման բոլոր փուլերով, ներառյալ՝ արտադրանքի/ծառայության մշակում, թիմի կազմավորում, արժեքի առաջարկ, շուկայական ռազմավարություն, հաճախորդերի ներգրավում, բիզնես մոդել, ֆինանսավորման ռազմավարություն և այլն:

- **Միջազգային մենթորություն.** Ստարտափները հնարավորություն կունենան աշխատելու բիզնես և տեխնոլոգիական բնագավառների առաջատար միջազգային մենթորների հետ::

- **Ֆինանսավորում, որը կազմում է ծրագրի անբաժանելի մասը.** Հաջող նախաձեռնությունների հետագա աճը խթանելու նպատակով ծրագիրը համագործակցում է նաև ADB Ventures ընկերության հետ: ADB Ventures-ը հիմնադրվել է սույն թվականի հունվարին՝ տեխնոլոգիական ուղղվածություն ունեցող, մեծ ներուժով ձեռնարկություններին աջակցելու և ներդրումներ կատարելու համար: Առաջին ADB Ventures հիմանդրամն ունի 17-ամյա ներդրման փորձ և աջակցում է վաղ փուլում և աճի փուլում գտնվող առողջապահական, գյուղատնտեսական, ֆինանսական և մաքուր տեխնոլոգիական բիզնեսներին: Վերջինի ուշադրության կենտրոնում կլինեն կլիմայական փոփոխությանը և կանանց առաջխաղացմանն ուղղված լուծումներ առաջարկող ընկերությունները: Նաև, ամենահաջողակ AIM CCTA vol.3 ստարտափներին հնարավորություն կտրվի ներկայացնել իրենց գաղափարները Granatus Ventures-ում և ստանալ ներդրումներ Granatus Tech4SDG հիմնադրամից: Հիմնադրվելով Հայաստանում՝ ՄԱԶԾ-ի աջակցությամբ, Granatus Tech4SDG հիմնադրամն ունի տեսլական՝ աջակցելու տեխնոլոգիական նորաստեղծ բիզնեսներին, որոնք լուծում են առաջարկում աշխարհի հիմնարար խնդիրներին: Նոր հիմնադրամը ներդրումներ կկատարի տեխնոլոգիական բիզնեսներում, որոնք սոցիալական և շրջակա միջավայրի վրա ազդեցության դրական ներուժ կունենան:

Առավել խոստումնալից ստարտափները հնարավորություն կունենան՝

- Ներկայանալ իրենց գաղափարներով հանձնաժողովի առջև, որը կընտրի առավելագույնը մինչև 10,000 **ԱՄՆ դոլար** դրամական պարգևի արժանի թիմերին
- Մասնակցել ստարտափների համար նախատեսված **միջազգային միջոցառումներին** (ինչպիսիք են՝ WebSummit, Rise Conference և այլն)
- Իրականացնել **պիլոտային նախագիծ**՝ շուկայում ընդլայման համար
- Իրենց գաղափարները առցանց և/կամ դեմ առ դեմ **ներկայացնել համաշխարհային ներդրողներին**
- Ծանոթանալ վենչուրային կապիտալին, ներդրումային ուղիներին և ֆինանսական աղբյուրներին

ԾԱՆՈԹԱՑԻ՛Ր ԾՐԱԳՐԻՆ ԵՒ ԴԻՄԻ՛Ր

CCTA2020: Էներգախնայողություն և վերականգնվող էներգիա



Ծրագիրը նախատեսված է **գաղափարի, նախասաղմնային, սաղմնային և զարգացման փուլում գտնվող ստարտափների, ինչպես նաև կայացած ընկերությունների համար:**

Ծրագրին կարող են դիմել «Էներգախնայողությանը և վերականգնվող էներգիայի» համար նորարարական լուծումներ առաջարկող **տեղական և միջազգային** ստարտափները և գրանցված ընկերությունները:

Ե՛վ տեղական, և՛ միջազգային ստարտափները կմասնակցեն աքսելերացիոն ծրագրին և հարակից նախագծերին՝ առցանց և հեռավար հաղորդակցման հարթակներով :

Բուն Աքսելերացիոն ծրագիրը կընդգրկի հետևյալ ուղղություններն ու գործընթացները՝

- **Ստարտափի կարիքների բացահայտման փուլ**
- **Ստարտափի կարիքներին համապատասխան ծրագրի մշակում և մենթորի ներգրավում**
- **ԲԻԶՆԵՍ ԾՐԱԳԻՐ**
  - **Ինտենսիվ բութքեմփ**. Աքսելերացիոն ծրագրի առաջին 6 շաբաթվա ընթացքում կանցկացվեն սեմինարներ՝ հատուկ ընտրված թեմաներով, ինչպես նաև մենթորների կողմից կանցկացվեն անհատական հանդիպումներ թիմերի հետ:
  - **Հաճախորդների ներգրավման փուլ.** 10-շաբաթյա սեմինար/ դասընթացներ՝ նվիրված շուկայի խորը ուսումնասիրությանը և հաճախորդների ներգրավմանը՝ բութքեմփի ընթացքում ստացած հմտությունների գործնական օգտագործմամբ:
- **ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ.** Տեխնոլոգիական թեմաների շուրջ 4-շաբաթյա թիրախային սեմինար
- **ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ:** Ազդեցության չափման և վերահսկման 4-շաբաթյա ծրագիր
- **ԱՆՀԱՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ.** Յուրաքանչյուր մասնակից թիմին կառաջարկվի հատուկ աջակցություն մենթորության շրջանակներում՝ կախված ստարտափի զարգացման կարիքներից:
- **ԴԵՄՈ ՕՐ.** Աքսելերացիոն ծրագրի եզրափակում, որտեղ ընտրված ստարտափները CCTA 2020-ի հանձնաժողովին կներկայացնեն իրենց գաղափարները:

CLIMATE CHANGE TECH ACCELERATOR

ImpactAim
Venture Accelerator

UNDP
Empowered lives.
Resilient nations.

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) ImpactAim «Կլիմայի փոփոխություն տեխնոլոգիական աքսելերացիա»-ն ֆինանսավորվում է Ռուսաստանի Դաշնության և ՄԱԶԾ երկրներին տրվող ներդրումային նախաձեռնության կողմից, Ասիական Զարգացման Բանկի վենչուրային ֆոնդի կողմից, ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության աջակցությամբ և իրականացվում՝ ՄԱԿ-ի Զարգացման Ծրագրերի ImpactAim աքսելերատորի, «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի (EIF), «Ինովացիոն Լուծումների և Տեխնոլոգիաների կենտրոն» հիմնադրամի (ISTC) և Ինժեներական քաղաքի հետ համատեղ՝ ապահովելով և՛ տեխնիկական, և՛ բնապահպանական ենթակառուցվածքային օժանդակություն:

Բոլոր նրանք, ովքեր հետաքրքրված են ծրագրով, կարող են լրացնել առցանց հայտը՝ մինչև **ՀՈՒԼԻՍԻ 15-ը** ներառյալ, **CCTA.AM** էջում

Հարցերի դեպքում կարող եք կապ հաստատել info@ccta.am էլ. փոստի հասցեով

Հիմնական գործընկերներ՝

ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆԿՈՒԲԱՑՈՒՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ENTERPRISE INCUBATOR FOUNDATION

istc FOUNDATION

Աջակից գործընկերներ՝

ENGINEERING CITY

ADB Ventures
with support of ADB Ventures